

ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ
(Աստվածաբանության դասախոս)

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ

33. ՏԱՍՆԵՐԿՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ
(Մարկ. Զ 7—13)

Զ 7 Նա իր մոտ կանչեց Տասներկուսին և սկսեց ուղարկել նրանց երկու-երկու ու նրանց իշխանություն տվեց պիղծ ոգիների վրա:
8 Նրանց պատվիրեց, որ ճանապարհի համար գավազանից բացի այլ բան չվերցնեն. ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ դրամ գոտիների մեջ,
9 այլ հագնեն հողաթափներ. և ասաց նրանց. «Երկու պարեգոտ մի՛ հագեք»:
10 Եվ ասում էր նրանց. «Ինչ տուն որ մտնեք, այնտեղ օթևանեցեք, մինչև որ այնտեղից ելնեք:
11 Եվ ուր որ ձեզ չեն ընդունի ու ձեզ չեն լսի, երբ որ այնտեղից ելնեք, ձեր ոտքերի փոշին թա՛փ թվեք՝ իբրև վկայություն նրանց համար»:
12 Եվ նրանք ելան ու քարոզում էին, որպեսզի մարդիկ ապաշխարեն:
13 Եվ բազում դևեր էին հանում, բազում հիվանդների օծում էին յուղով ու նրանց բժշկում:

Հիսուս նշանակեց տասներկու առաքյալներին, «որ իր շուրջը լինեն, և նրանց քարոզելու ուղարկի» (Մարկ. Գ 14): Մինչև այստեղ ընթերցողը նրանց գլխավորապես տեսավ Հիսուսի հետ միասին, նրա խնամքի տակ պատրաստված, նրա կյանքին բաժնեկից: Այժմ թվում է, թե նրանք հասունացել են՝ նվիրվելու համար քարոզության, որը նրանց կոչումի երկրորդ կողմն է և միաժամանակ ամենահիմնականը: «Առաքյալ» նշանակում է «ուղարկված»:

Հիսուս նրանց մի կարճ ճառ է ուղղում անկապակից ոճով, բայց շատ կենդանի: Այդ ճառը հանդիսանում է կատարյալ քարոզչի մի տեսակ առձեռն գրքույկ, այնպես, ինչպես սուրբ Մարկոսն է հասկանում այն: Հիսուսի այդ ճառը հատկանշվում է բազմաթիվ գծերով.

— Լինել երկու-երկու: Դա թույլ է տալիս օգնել մեկը մյուսին, փոխադարձաբար հսկել միմյանց վրա՝ տրված վկայության որակի կապակցությամբ, պարզել ստեղծված կացությունը և այլն: Գործք Առաքելոց գրքում աշակերտները ճանապարհորդում են միշտ երկուական խմբերով՝ հարուցյալ Հիսուսի Ավետիսը տանելու համար:

— Ունենալ միայն նվազագույն ուղեբեռը: Գավազանն ու հողաթափները այն միակ իրերն են, որ Մարկոսը արտոնում է վերցնել: Այդ իսկ շատ է մի երկրի համար, որտեղ մարդկանց մեծ մասը ման է գալիս ոտաբոբիկ: Դա զգեստավորումն է այն ուղևորների, որոնք երկար ճանապարհ ունեն անցնելու: Դա նաև հրեաների Զատկի ծիսարանում նախատեսված զգեստավորումն է ի հիշատակ այն ճաշի, որ եբրայեցիները կերան շտապով, Մովսեսի ժամանակ, Եգիպտոսից հեռանալիս: «Դուք այսպես պիտի ուտեք. գոտիները կապած ձեր մեջքին, կո-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվականի № № Բ—Զ-ից:

շիկները՝ ձեր ոտքերին, ցուպը՝ ձեր ձեռքին» (Ելից ԺԲ 11): Մեկնել այսպիսի կգեստավորումով՝ նշանակում է ձեռնարկել խոստումներով հարուստ մի ճանապարհորդություն:

— Ունենալ միայն մի օթևան այն քաղաքում, որտեղ պետք է կանգ առնել: Զցրվել բնավ: Նույն ձևով, երբ Հիսուս կանգ է առնում Կափառնայումում, միշտ բնակվում է նույն տեղում, հավանաբար Սիմոն-Պետրոսի տանը: Քարոզիչներին ընդունող հյուրընկալը կարող է վճռական դեր խաղալ Ավետարանի տարածման գործում:

— Բնավ չմիաբանել մերժողների հետ: Երբ մի քաղաքի բնակիչների հոգիները բաց չեն ավետարանական պատգամին, այդ քաղաքից մեկնելիս ներբաններիդ կպած փոշին թափ տալը բավականին խոսուն է. այդպիսի մարդկանց մոտից մարդ ոչինչ չի ուզում տանել. ոչ իսկ ցեխը կամ ավելաղբը: Դա նկարագրված է նաև Գործք Առաքելոցի մեջ:

Նման պատվերներով պինված՝ տասներկու առաքյալները մեկնում են առաքելական գործունեության: Ճիշտ ինչպես Հիսուսն ու Հովհաննես Մկրտիչը, նրանք քարոզում են ապաշխարություն (Մարկ. Ա 2—8 և Ա 14—15): Սակայն նրանք չեն խոսում Աստուծո Թագավորության մասին: Թվում է, թե դա չափազանց նուրբ մի նյութ է, որ Հիսուս վերապահում է իրեն:

Նրանք ի վիճակի են դևեր հանելու և բժշկումներ կատարելու. Հիսուս նրանց տվել է անհրաժեշտ իշխանությունը: Ի տարբերություն Աստուծո Թագավորության քարոզության, դա Տիրոջը վերապահված մի առանձնաշնորհում չէ: Մեզ՝ 20-րդ դարի ընթերցողներիս համար, դևեր հանելը կամ նման բժշկումներ կատարելը արդյունք է բացառիկ մի կարողության, որից մենք ամբողջապես զուրկ ենք: Բայց Մարկոսի համար դա մաս է կազմում Հիսուսի օգնականներին վստահված պարտականություններին: Հրաշքների աշխարհը շատ ավելի հարազատ է հնադարին, քան մեր ժամանակաշրջանին:

Վերջապես, այն պատգամը, որ Մարկոսը տալիս է Եկեղեցուն առաքելական գործունեության համար աշակերտների մեկնումը նկարագրելիս, կրկնակի է:

Նախ նա տալիս է առաքելական կյանքի մի տեսակ կանոնադրություն, որ մշտապես արժեք է ներկայացնում ետ-Հարության շրջանի քրիստոնյաների համար. տասներկու առաքյալների նյութական միջոցների աղքատությունը մի դաս է բոլոր նրանց համար, ովքեր առաքելական գործունեություն չեն պատկերացնում առանց տեխնիկական ամենալայն միջոցների օգտագործման:

Այնուհետև նա ցույց է տալիս, որ Հիսուս Ավետարանի պատասխանատվությունը չի վարանում վստահել շատ սովորական մարդկանց: Մեր համեստ կարողությունը կամ մեր համոզմունքների տկարությունը պատճառներ չեն, որ մեզ ետ պահեն առաքյալներ լինելուց:

Մարդ քարոզելով է առաջ ընթանում հավատի մեջ:

34. ԱՅԼԱԶԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ ՀԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ

(Մարկ. Զ 14—16)

Զ 14 Հերովդես արքան լսեց այս բաները, որովհետև Հիսուսի անունը հայտնի էր դարձել. և նա ասաց. «Հովհաննես Մկրտիչը հարյավ մեռելներից, և դրա համար զորություններ են գործվում նրա միջոցով»:

15 Ուրիշներ ասում էին, թե՝ Եղիան է. իսկ մյուսները, թե՝ մարգարե է կամ թե՝ մարգարեների նման մեկը:

16 Երբ Հերովդեսը այս լսեց, ասաց. «Հովհաննեսը, որի գլուխը կտրել տվեցի ես, սա նա է. մեռելներից հարյավ»:

Մինչ աշակերտները մեկնում են առաքելական գործունեության, Մարկոսը ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնում է այն բանի վրա, թե ինչ են ասում Հիսուսի մասին, որի խոսքը և գործերը կարմանք են պատճառում: Շատերը մտածում են, որ նրա մեջ իրենից գերիվեր ինչ-որ բան է բնակվում. և յուրաքանչյուրն իր մտքում մի կարծիք է հորինում՝ ելնելով այն բանից, ինչ ծանոթ է իրեն:

Ոմանց համար Հիսուս Եղիա մարգարեն է՝ երկիր իջած: Արդարև, աստվածաշնչական ավանդությունը վկայում է, որ հին ժամանակների (շուրջ 850 թ. Քրիստոսից առաջ) այդ խստասիրտ մարդը չի մահացել մյուս մարդկանց նման: Թագավորաց չորրորդ գրքում պատմվում է, որ նա մի կառքի վրա նստած տարվել է երկինք (Դ Թագ. Բ 11): Մարդիկ մտածում էին, որ վերջին դատաստանից առաջ նա պիտի վերադառնար՝ վերջին անգամ հորդորելու մեղավոր մարդկանց, որ ապաշխարեն: Մաղաքիա մարգարեի գիրքը այսպես է վերջանում.

Եվ ահա ուղարկում եմ ես ձեզ
Եղիա մարգարեին,
Քանի դեռ չի եկել
Տիրոջ օրը մեծ և երևելի,

**Որ նա դարձնի հոր սիրտը դեպի
իր որդին
Եվ սիրտը մարդու՝ դեպի նման
իր.
Գուցե գամ ու հարվածեմ
Երկիրը համայն:**
(Մաղաքիա Գ 23—24)

Ուրիշների համար Հիսուս մի հավելյալ մարգարե է: Իսրայելի ժողովուրդն արդեն ճանաչել էր մեծ թվով մարգարեներ: Հնգամատյանի վերջին գրքի ժամանակներից մեկ հասած աստվածաշնչական մի ավանդություն պատմում է մի մարգարեի մասին, նման Մովսեսի, որին Աստված առաքելու է իր ժողովրդին, և եբրայեցիները, մյուս մարգարեների մեծամասնության ուսմունքը դեն նետելուց հետո, վերջապես լսելու են նրան: Մովսեսը հետևյալն էր ասել Իսրայելի ժողովրդին.

**Քո Տեր Աստվածը քո եղբայրների
միջից
Պիտի հարուցի քեզ համար
Ինձ նման մի մարգարե,
Եվ դուք պիտի լսեք նրան:**
(Երկրորդումն Օրինաց ԺԸ 15)

Գալով Հերովդես Անտիպասին, որը Գալիլիայի թագավորն էր Հիսուսի քարոզության ժամանակաշրջանում, նա բոլոր պատճառներն ունի մտածելու մի երրորդ լուծման մասին: Մեղապարտ զգալով իրեն Հովհաննես Մկրտչի մահվան համար, որին գլխատել էր տվել (նրա մահապատժի մասին Մարկոսը կպատմի հենց քիչ հետո), նա վախենում է, որ իր կոհը կարող է վերակենդանացած լինել և նորից ներկայանալ ու հանդիմանել իրեն իր մեղքերի համար:

Աստված կարո՞ղ էր հարություն տալ իր հավատարիմ ծառաներից մեկին: Այդ դարաշրջանի հրեաների մտայնությունն այնպիսին էր, որ նրանք մեծ մասամբ հավատում էին հարության հնարավորությանը: Հովհաննես Մկրտչի համար առաջ քաշված ենթադրությունը նախապատրաստում է այն, ինչ տեղի պիտի ունենա այնուհետև Հիսուսի համար:

35. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԳԼԽԱՏՈՒՄԸ
(Մարկ. Զ 17—29)

**Զ 17 Արդարև, ինքը՝ Հերովդեսն էր մարդ
ուղարկել, ձերբակալել էր Հովհաննե-
սին, կապել նրան ու բանտարկել՝ իր
եղբոր՝ Փիլիպպոսի կնոջ՝ Հերովդիայի
պատճառով, քանի որ Հերովդեսը նրան
իրեն կին էր դարձրել,**
**18 և քանի որ Հովհաննեսը Հերովդեսին
ասում էր. «Քո եղբոր կնոջը քեզ կին
առնելը օրինավոր չէ»:**
**19 Եվ Հերովդիան ոխ էր պահել նրա դեմ
և ուզում էր սպանել տալ նրան, բայց
չեր կարողանում,**
**20 որովհետև Հերովդեսը վախենում էր
Հովհաննեսից, քանի որ նրան գիտեր
որպես արդար և սուրբ մարդու, և նրան
հովանավորում էր ու նրան անսալով՝
շատ բաներ էր անում և քաղցրությամբ
լսում էր նրան:**
**21 Սակայն մի հարմար օր եկավ, երբ Հե-
րովդեսը իր ծննդյան տարեդարձի ընթ-
րիքն էր տալիս իր նախարարներին,
Գալիլիայի մեծամեծներին և հազարա-
պետներին:**
**22 Եվ երբ Հերովդիայի դուստրը, ներս
մտնելով ու պարելով, դուր եկավ Հե-
րովդեսին և սեղանակիցներին, թագա-
վորն ասաց աղջկան. «Ուզի՛ր ինձնից,
ինչ որ կամենում ես, և ես կտամ քեզ»:**
**23 Եվ երդվեց նրան շատ անգամ, թե՝ դու
ինձնից ինչ էլ որ ուզես, կտամ քեզ,
մինչև իսկ իմ թագավորության կեսը:**
**24 Աղջիկը դուրս գնալով իր մորն ասաց՝
ի՞նչ ուզեմ: Եվ սա ասաց՝ Հովհաննես
Մկրտչի գլուխը:**
**25 Եվ աղջիկը շտապով վերստին մտնելով
թագավորի մոտ՝ ասաց. «Ուզում եմ, որ
հիմա, իսկույն, ինձ տաս սկուտեղի վրա
Հովհաննես Մկրտչի գլուխը»:**
**26 Եվ թագավորը սաստիկ տրտմեց, բայց
իր երդումների և հրավիրյալների պատ-
ճառով չուզեց մերժել նրան:**
**27 Եվ թագավորը իսկույն դահիճ ուղար-
կեց ու հրամայեց բերել նրա գլուխը: Եվ
սա գնաց գլխատեց նրան բանտում.**
**28 Նրա գլուխը սկուտեղով բերեց ու տվեց
աղջկան, և աղջիկը տարավ տվեց իր
մորը:**
**29 Երբ նրա աշակերտները լսեցին, եկան-
վերցրին նրա մարմինը և դրեցին գե-
րեզմանի մեջ:**

Տասներկու աշակերտների առաքելության տևողության ընթացքում, շարունակելով ըստ բաղեցնել իր ընթերցողներին, Մարկոսն այժմ մի վերադարձ է կատարում դեպի ետ: Նա շարադրում է Հովհաննես Մկրտչի մահվան հանգամանքները: Սա բանտարկվել էր, երբ Հիսուս դեռ չէր սկսել իր քարոզությունը (Մարկ. Ա 14—15):

Այս կենդանի պատմվածքը մեկնաբանություն գրեթե չի պահանջում: Այնուամենայնիվ դժվար է որևէ հստակ բան գտնել այնտեղ, որովհետև դա վերաբերում է ընտա-

նեկան մի բարդ պատմության, որի գործող անձանց լավ ծանոթ չենք: Ովքե՞ր են այդ բոլոր մարդիկ:

Որոշելու համար նրանց միջև գոյություն ունեցող ազգակցական կապերը՝ հարկավոր է ետ գնալ ու հասնել մինչև նրանց ընդհանուր նախնին՝ Մեծն Հերովդես արքան, որը մահացել էր Հիսուսի քարոզության ըսկըսելուց ավելի քան երեսուն տարի առաջ և որը բազում կավակներ էր ունեցել տասը տարբեր ամուսնություններից: Այն թագավորը, որը գլխատել տվեց Հովհաննես Մկրտչին, և որին Ղուկաս ավետարանիչը մասնակից է դարձնում Հիսուսի դատավարությանը, իր ամբողջական անունով կոչվում է հերովդես Անտիպաս: Սա Մեծն Հերովդեսի որդիներից մեկն է և իշխել է գլխավորապես Գալիլիայում՝ իր հոր թագավորության հյուսիսային մասում:

Փիլիպպոսը նրա խորթ եղբայրն էր և նրա նման որդին էր Մեծն Հերովդեսի: Նա չիշխեց բնավ և քաղաքական ուշագրավ մի պաշտոն չունեցավ:

Գալով Հերովդիային՝ նա թոռնուհին էր Մեծն Հերովդեսի և դուստրը երկու նախորդների մեկ ուրիշ խորթ եղբոր: Նա ամուսնացավ նախ Փիլիպպոսի՝ իր հորեղբոր հետ, որից ունեցավ մի աղջիկ, այն աղջիկը, որը պարեց խնջույքում և որը մենք պատմիչներից գիտենք, թե կոչվում էր Սալոմե: Այս ձանձրացած անկասկած համբավ չունեցող մի մարդու կինը լինելուց՝ նա հրապուրվեց Գալիլիայի թագավոր և իր տագր Հերովդես Անտիպասով, որը նույնպես իր հորեղբայրն էր: Հովհաննես Մկրտիչը Հերովդես Անտիպասին չէր մեղադրում իր եղբոր աղջկա հետ ունեցած արյունապիղծ հարաբերությունների համար (այդ ընտանիքում մարդ թե կին՝ բոլորը քիչ թե շատ մերձավոր ազգականներ էին), այլ՝ շնության համար. Հերովդես Անտիպասը պոռնկանում էր այն կնոջ հետ, որը պաշտոնապես իր եղբոր կինն էր:

Այն մեղադրանքները, որ Մարկոսի ավետարանում Հովհաննես Մկրտիչն ուղղում է նրան, իրոք վայել են մի մարգարեի. նա ամբաստանում է թագավորին նրա հոռի վարքի համար և դրանով իր վրա հրավիրում նրա սիրուհու ատելությունը, որին սաստիկ տհաճություն է պատճառում մեղադրանքի առարկա դառնալը: Հովհաննես Մկրտչի համարձակ խոսքը մեծամեծների առաջ ներկայացվել է որպես գլխավոր շարժառիթ նրա նկատմամբ առաջացած անվստահության:

Ի վերջո դրա համար նա կոհ է տալիս իր կյանքը:

36. ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՀՈՎՎԻ
(Մարկ. Զ 30—34)

Զ 30 Առաքյալները հավաքվեցին Հիսուսի մոտ ու նրան պատմեցին այն ամենը, ինչ որ արել էին և ուսուցանել:

31 Եվ Հիսուս նրանց ասաց. «Եկե՛ք դուք առանձին մի ամայի տեղ ու մի քիչ հանգստացե՛ք». որովհետև եկող-գնացողները շատ էին, և նրանք հաց ուտելու անգամ ժամանակ չունեին:

32 Եվ նավակով գնացին մի ամայի տեղ՝ առանձին:

33 Սակայն մարդիկ տեսան նրանց, որ գընում էին, և շատերը ճանաչեցին ու բոլոր քաղաքներից հետիոտն, խուռներամ այնտեղ վազեցին և մոտեցան նրանց:

34 Եվ նա նավակից դուրս ելնելով՝ մեծ բազմություն տեսավ ու գթաց նրանց, որովհետև նման էին ոշխարների, որոնք հովիվ չունեն. և սկսեց նրանց ուսուցանել շատ բաներ:

Առաքյալները վերջապես վերադառնում են Հիսուսի մոտ և զեկուցում նրան իրենց արածի մասին: Ինքը Հիսուս, ըստ իր սովորության, ցանկանում է նրանց ընդունել առանձին, որպեսզի ավելի հաճույքով խոսի նրանց հետ, և նրանք էլ արժանի հանգիստ վայելեն: Ոչինչ ավելի օրինական է և արդար, քան այն հանգիստը, որ տրվում է իր առաքելությունը կատարած քարոզչին: Մարկոսն արդեն բազմիցս ցույց է տվել, թե Հիսուս ինչպես է ցանկանում մտերմիկ պահեր ունենալ իր աշակերտների հետ:

Սակայն Տերը ձախողվում է: Ամբոխը, որը խռնվում էր այդ փոքրիկ խմբի շուրջը այն աստիճան, որ հնարավորություն չէր տալիս, որ մարդիկ կարողանան հանգիստ ճաշել, կռահում է, որ Հիսուս և իր առաքյալները ուզում են խույս տալ իրենից: Եվ միջոցներ է ձեռք առնում, որպեսզի նրանցից առաջ հասնի այնտեղ, որտեղ նրանք գընում են: Երբ Հիսուս և իր աշակերտները իջնում են նավակից, նրանք իրենց գտնում են տհաճ մի անակնկալի առջև՝ տեսնելով այդ ամբողջ բազմությունը, որն սպասում էր իրենց:

Առաջ, նման մի կացության մեջ, Հիսուս ինքնապաշտպանության էր դիմում (Մարկ. Գ 7—12): Այս անգամ նա տարբեր կերպ է վարվում. մարդիկ, որոնք կիլոմետրեր են կտրել իր ետևից հասնելու համար, վստահաբար մեծ շփոթմունքի մեջ են: Եթե նրանք այդ աստիճան ծարավի են մի քարոզչի խոսքերին, նշանակում է, որ նրանց կրոնապետերը չեն տալիս նրանց այն հոգևոր սը-

նունդը, որի կարիքն ունեն: Իսրայելն այլևս չունի իսկական հովիվներ: Հենց դա էր հաստատում Եզեկիել մարգարեն մոտ վեց դար առաջ.

Ո՛վ հովիվներ Իսրայելի.
Միթե հովիվներն իրենց անձե՞րն են արածացնում.
Չէ՞ որ նրանք արածացնում են ոչխարներ...
Մոլորվեցին ոչխարներն իմ
Բոլոր լեռների, բոլոր բարձր բլուրների վրա.
Երկրի ամբողջ երեսին
Ցրիվ եկան ոչխարներն իմ,
Եվ չկա մեկը, որ փնտրի նրանց,
Եվ չկա մեկը, որ դարձնի նրանց:
(Եզեկիել ԼԴ 2. 6)

Մի կարևոր տեղ բաց է մնացել: Հիսուս գրավում է այդ տեղը: Նա սկսում է խոսել: Դա երկար է տևում: Ավետարանիչը հասկացնում է, որ նրա քարոզները հագեցնում են ունկնդիրների ծարավը:

Հիսուս իրապես այն հովիվն է, որին կարիք ունեն մարդիկ:

37. ՀԱՑԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ
(Մարկ. Զ 35—44)

Զ 35 **Երբ շատ ժամեր անցան, աշակերտները, մոտենալով, ասացին. «Սա ամայի տեղ է, քանի դեռ օրը չի վերջացել,**
36 **արձակի՛ր այս ժողովրդին, որպեսզի գնան ու շրջակայքի գյուղերում և գյուղերում իրենց համար ուտելիք գնեն, որովհետև այստեղ ուտելու բան չունեն»:**
37 **Նա պատասխանեց նրանց և ասաց. «Դո՛ւք նրանց ուտելիք տվեք»: Ասացին նրան. «Գնանք-գնե՞նք երկու հարյուր դահեկանի հաց և նրանց տանք ուտելու»:**
38 **Նա ասաց նրանց. «Քանի՞ նկանակ ունեք. գնացե՛ք-տեսեք»: Երբ իմացան, նրան ասացին. «Հինգ նկանակ և երկու ձուկ»:**
39 **Եվ նա հրամայեց նրանց խումբ-խումբ նստել դալար խոտի վրա:**
40 **Եվ նրանք դաս-դաս նստեցին, տեղ-տեղ՝ հարյուր, տեղ-տեղ՝ հիսուն:**
41 **Եվ նա վերցնելով հինգ նկանակը և երկու ձկները՝ նայեց դեպի երկինք, օրհնեց, մանրեց նկանակները և տվեց աշակերտներին, որպեսզի դնեն նրանց առաջ: Եվ երկու ձկներն էլ բաժանեց բոլորին:**
42 **Բոլորը կերան և հագեցան**
43 **և տասներկու սակառ լիքը կտորտանքները վերցրին, ինչպես նաև՝ ձկներից:**
44 **Եվ նրանք, որ կերան, մոտ հինգ հազար հոգի էին:**

Ավետարանում հացի բազմացման դեպքերը (սա առաջինն է) արմատավորվում են մարգարեական գործերին վերաբերող ավանդության մեջ, գործեր, որոնցով Աստված իր բարիկամեցողությունն ու վեհանձնությունն է արտահայտում մարդկանց նկատմամբ: Հին Կտարականը հիշատակում է համանման մի դեպք, որը կատարվել է Եղիսե մարգարեի կողմից Քրիստոսից առաջ 9-րդ դարում: Կոչնականները թվով ավելի քիչ էին, իսկ ռոջերթի կերակուրը՝ ավելի առատ, սակայն պատմությունը ցույց է տալիս, որ, ինչպես ավետարանում, նրանց առաջ դրված կերակրի քանակը բնականաբար չէր թույլատրում, որ նրանցից յուրաքանչյուրը հագենա: Եղիսեն՝ Աստուծո մարդը, իր սպասավորին հայտնում է Տիրոջ կամքը՝ «Թող ուտեն, և թող ավելանա»: Ահա այդ դեպքը.

Մի մարդ եկավ Բեթսարիսայից և Աստուծո մարդուն բերեց առաջնակարգ այլուրից պատրաստված հացեր, գարե հացեր և ատոք դալար հասկեր՝ իր տոպրակի մեջ դրած: Սա ասաց. «Տվե՛ք այդ ժողովրդին, և թող ուտեն»:

Նրա սպասավորն ասաց. «Այս ի՞նչ է, որ դնեմ հարյուր մարդու առջև»:

Եվ նա ասաց. «Տո՛ւր այդ ժողովրդին, և թող ուտեն. որովհետև այսպես է ասում Տերը՝ թող ուտեն, և թող ավելանա»:

Եվ նա դրեց նրանց առջև, նրանք կերան և թողին կտորտանքներ, ըստ Տիրոջ խոսքի:
(Դ Թագ. Դ 42—44):

Հիսուսի կատարածը մոտ է սրան. բոլորը կերան հագենալու աստիճան, և դեռ ուտելիք ավելացավ: Այն ձևը, որով պատմվել է այս դեպքը, առանձնակի նշանակություն է տալիս նրան: Եթե իրոք հրաշք կա, սա ավելին է, քան հրաշքը:

Ճաշը, որի հիմնական սնունդը հացն է, շարունակություն է կպմում մի ուսուցման: Նախորդ դրվագը և սա ներկայացված են որպես մի պատարագի երկու կարևոր պահերը. խոսքի ծես (Մարկ. Զ 30—34), որին հաջորդում է հաղորդության ծեսը: Հացերի օրհնության համար գործածված բառապաշարը (համար 41) շատ մոտ է այն բառապաշարին, որ Մարկոսն օգտագործելու է վերջին ընթրիքի համար, երբ Հիսուս սեղան

է նստելու իր տասներկու աշակերտների հետ Ավագ հինգշաբթի օրը երեկոյան.

Եվ մինչ դեռ ուտում էին, Հիսուս հաց վերցնելով՝ օրհնեց և կտրեց, տվեց նրանց ու ասաց. «Առե՛ք, ա՛յս է իմ մարմինը»:
(Մարկ. ԺԴ 22)

Հացի բաղմացման այս դրվագում աշակերտները նույնպես սուրբ հաղորդության մերձեցման ի նպաստ դեր են կատարում: Հիսուս սկզբնաղբյուրն է այն կերակրի, որից օգտվում են ներկա եղող բոլոր անձինք, իսկ աշակերտները միջնորդներն են: Սկզբում նրանք կողմնակից են լինում, որ բաղմությունը ետ դառնա, որովհետև չէին պատկերացնում, թե ինչպես կկարողանան կըշտացնել այդքան ժողովրդի (համար 36). ապա նրանց հանձնարարվում է միջնորդել գործնապես, որպեսզի մարդիկ կերակրվեն (համար 37). իսկ դրվագի վերջում իրենք են դնում նրանց առաջ Տիրոջ կողմից ձևափոխված հացերն ու ձկները: Հիսուս նրանց մոտիկից մասնակից է դարձնում իր ձեռնարկած գործին: Եթե նա գլխավոր դերակատարն է հացի բաղմացման, և ինչպես և հաղորդության, ապա աշակերտները նրա սպասավորներն են կամ պաշտոնյաները:

Ուրեմն Հիսուս ի հայտ է գալիս որպես մեկը, որ հագեցնում է բաղմությունների ծարավը. նյութական սննդի ծարավ, բայց նաև խոսքի ծարավ և, կանխապես, իր մարմնի ծարավ: Նրա կատարած գործը տեղի է ունենում Իսրայելի երկրում, և դրվագում բերված թվերը հաստատում են, որ հացի այս առաջին բաղմացման մեջ հրեա ժողովրդի պահանջներն են արտահայտված, որոնց պատասխանում է Հիսուս: Սկզբում աշակերտները իրենց տրամադրության տակ հինգ նկանակ ունեն. հինգը եբրայական Աստվածաշնչի ամենասրբազան մասի՝ Թորայի գրքերի թիվն է: Կերակրվում են նույնպես հինգ հազար հոգի. միևնույն թիվը կըրկնվել է դրվագի վերջում: Գալով տասներկու սակառներին, դրանք հիշեցնում են Իսրայելի ցեղերի թիվը՝ Աստվածաշնչի ժողովրդի կազմը (համեմատել այս թվերը հացի երկրորդ բաղմացման դրվագի մեջ բերված թվերի հետ. Մարկ. Ը 1—9):

Ավետարանիչը պարզ կերպով ցույց է տալիս, որ Հիսուս նախ եկավ Իսրայելի համար: Տեսնելով, որ հրեա բաղմությունները իր ետևից են վազում, նա խորապես հուզվեց (Մարկ. Զ 30—34): Հրեա ժողովուրդը այն ժողովուրդն է, որին Աստված հովիվներ ուղեց տալ: Այդպիսիների պակասի պատճառով Աստված նրան տվեց մի նո՛ր հովիվ: Իսրայելի համար է, որ այդ հովիվը, առաջին անգամ լինելով, կանխանշեց Եկեղեցուն կտակված հաղորդության խորհուրդը:

38. ՀԻՍՈՒՍ ՔԱՅԼՈՒՄ Է ԾՈՎԻ ՎՐԱՅՈՎ
(Մարկ. Զ 45—52)

Զ 45 Իսկույն ևեթ Հիսուս շտապեցրեց աշակերտներին, որ նավակ մտնեն և իրենից ավելի առաջ գնան հանդիպակաց կողմը՝ դեպի Բեթսայիդա, մինչև ինքը ժողովրդին արձակեր:
46 Եվ բաժանվելով նրանցից՝ լեռ բարձրացավ աղոթք անելու:
47 Երբ երեկո եղավ, նավակը ծովի մեջտեղում էր, իսկ ինքը՝ ցամաքի վրա:
48 Եվ տեսավ նրանց, որ հողմակոծ էին լինում թիավարելիս, որովհետև քամին նրանց հակառակ կողմից էր. գիշերվա չորրորդ պահին նա գալիս էր նրանց մոտ, ծովի վրա քայլելով, և ուզում էր նրանցից առաջ անցել-գնալ:
49 Երբ նրանք տեսան, որ քայլում է ծովի վրա, կարծեցին, թե մի ուրվական է, և աղաղակ բարձրացրին.
50 որովհետև ամենքը տեսան նրան և խըռովվեցին: Եվ նա իսկույն խոսեց նրանց հետ ու ասաց. «Քաջալերվեցե՛ք, ե՛ս եմ, մի՛ վախեցեք»:
51 Եվ նա նավակ բարձրացավ նրանց մոտ, և քամին դադարեց: Նրանք առավել ևս ապշել էին իրենց մտքում և սաստիկ զարմանում էին,
52 քանի որ իրենց մտքերը թմրած լինելով՝ չէին հասկացել նաև այն, ինչ վերաբերում էր հացի բաղմացմանը:

Բեթսայիդան սահմանամերձ մի քաղաք է հեթանոսների երկրում, Տիբերիական լճի արևելյան ափին, ճիշտ այն տեղում, որտեղ թափվում է Հորդանան գետի վերին մասը: Հրեաներ են բնակվում այնտեղ, բայց քաղաքը գտնվում է անծանոթ երկրամասերի սահմաններին, որտեղ իշխում է անմաքրությունը: Զարմանալու ոչինչ չկա, հետևաբար, որ աշակերտները ցանկություն չեն ունեցել գնալու այնտեղ, և Հիսուս էլ ստիպել է նրանց մեկնել, առավել ևս, որ նա նրանց հրահանգում է գնալ որպես հետախույզներ: Նրանք լավ էին հիշում, թե ինչ էր եղել իրենց նախորդ այցելությունը հեթանոսական երկրում, գերգեսացիների մոտ, թե ինչպես իրենցից պահանջել էին, որ մեկնեն այդտեղից, ուստի և հայտնապես չէին ուզում վերանորոգել այդ դառն փորձառությունը (Մարկ. Ե 1—20):

Սակայն ծովի վրա քայլելու այս դեպքը

բաց է անում ավետարանի մի հատված, ուր Հիսուս հաճախ է լինելու հեթանոսների երկրում: Հացի բազմացման դեպքով մի որոշ բարձունք նվաճվեց հրեա բազմությունների հետ Հիսուսի ունեցած բարաբերություններում: Հիսուս նրանց տվեց առավելագույնը: Չհաշված նրա մի քանի այցելությունները Գալիլիա, նա այժմ ավելի հաճախ որոշ ժամանակով լինելու է Տիբերիական լճի արևելյան կամ հյուսիսային ափերին, Դեկապոլսում և Տյուրոսի կամ Սիդոնի կողմերում: Այսպիսով Մարկոսը հայտնում է Ավետարանի քարոզության հետագա տարածումը բազում ազգերի մեջ և միաժամանակ գծում է մի շրջնակ, որտեղ Հիսուս, գալիլիացիների մոլեռանդ բազմություններից հեռու, հեշտությամբ պիտի կարողանա առանձին լինել իր աշակերտների հետ՝ ամբողջացնելու համար նրանց դաստիարակության գործը:

Ծովի վրա քայլելու դրվագը շատ կողմերով հիշեցնում է փոթորկի խաղաղեցումը (Մարկ. Դ 35—41): Աշակերտները դժվար դրության մեջ են ջրի վրա, որը, ինչպես տեսանք, թշնամական մի տարր է, որտեղ չարի կորությունները ավելի կամ պակաս միշտ ներկա են լինում: Քամին փչում է հակառակ կողմից, նավակը հողմածեծ է լինում ծովի մեջտեղում, և դա տևում է մինչև գիշերվա չորրորդ պահը, այսինքն՝ մոտավորապես առավոտյան ժամը երեքը: Հիսուս լեռը բարձրացած՝ աղոթում է: Աշակերտները մենակ են:

Սակայն նրանց դրությունը նվազ վտանգավոր է թվում, քան այն ժամանակ, երբ փոթորկի էին բռնվել: Նրանք խուճապի չեն մատնվում այնքան ժամանակ, ինչքան դեռ մենակ են: Ըստ գրվածքի, Հիսուս է լինում նրանց վախի պատճառը: Այն ձևով, ինչ ձևով նա երևում է նրանց, ծովի վրա քայլելիս, ավելի թեթև քան ալիքները՝ նրանցից առաջ անցնելու մտադրությամբ, որպեսզի ապահով տեղ հասցնի նրանց, դա Մարկոսի ընթերցողներին հիշեցնում է հարուցյալ Աստվածորդուն, որն առաջնորդում է իր Եկեղեցին և այն պահպանում վտանգից: «Նա ձեզնից առաջ գնում է Գալիլիա», պիտի ասեր Զատկի առավոտյան բաց գերեզմանի մեջ նստած երիտասարդը այն կանանց, որոնք ապշել-մնացել էին՝ այնտեղ չգտնելով Հիսուսի մարմինը. և Հարության հայտնությունը նրանց մենակ պիտի թողներ իրենց վախի հետ (Մարկ. ԺԶ 1—8):

Ծովի վրա քայլելու տեսարանում Հիսուս մտադրվում է աշակերտների առջևից ընթանալ, որպեսզի օգնի նրանց՝ հասնելու Բեթսայիդայի շրջանը: Բայց նրա ներկայությունը այդ անսովոր ձևի տակ՝ նրանց ավելի է սարսափեցնում, քան նրա բացակայությունը: Մարդիկ միշտ երկյուղով ու դողալով են ընդունում այնպիսի ցնցիչ մի պատգամ, ինչպիսին հարության պատգամն է. և ծովի վրա Հիսուսի քայլելը ուրիշ բան չէ, եթե ոչ մի տեսակ դրա նախապատկերումը:

Վերջապես, աշակերտների վախի առջև, Հիսուս փոխում է իր ծրագիրը: Նա նավակ է բարձրանում նրանց մոտ. քամին հանդարտվում է. հորիզոնը պայծառանում է ու դառնում ավելի վստահեցնող: Փոխանակ Բեթսայիդա գնալու, ինչ որ նախապես Հիսուսի մտադրությունն էր եղել, նավակը վերադառնում է Տիբերիական լճի հրեական ափը և ցամաք է դուրս գալիս Գեննեսարեթում՝ Կափառնայումի հարավում (տե՛ս հաջորդ հատվածը՝ Մարկ. Զ 53—56):

Հայտնապես աշակերտները դեռ պատրաստ չեն մնալու հեթանոսական երկրում, եթե Հիսուս ֆիզիկապես իրենց հետ չէ: Ավետարանիչը բավականին խիստ բառերով է նկարագրում նրանց ներքին տրամադրությունը. «Նրանց միտքը թմրել էր» (համար 52): Դա նույն տիպի թմրություն է, որի մասին խոսում էր Մարկոսը Հիսուսին դավող փարիսեցիների առնչությամբ: Եվ աշակերտները, ասում է գրվածքը, «չէին հասկացել նաև այն, ինչ վերաբերում էր հացի բազմացմանը» (համար 52):

Մարկոսը լայնորեն զարգացնելու է աշակերտների անհասկացողության այս թեման, որի մեկնակետը եղավ հացի առաջին բազմացումը: Ի՞նչ կար հասկանալու այդտեղ. որ Բարի լուրի քարոզությունը կատարվա՞ծ էր, և որ այժմ համարձակությամբ պետք էր ձեռնամո՞ւխ լինել հեթանոսների մեջ ավետարանը քարոզելու գործին. որ Հիսուս միշտ այդտեղ էր, որպեսզի մարդկանց կարիքնե՞րը հոգար, որ Հիսուս իր հույսը դրել էր իր աշակերտների վրա, որպեսզի նրանք իր օգնականնե՞րը լինեն:

Գուցե մի քիչ այս բոլորը միաժամանակ: Մարկոսը հստակ չի ասում այդ: Նրա ավետարանի ընթերցողները, այսպիսով, կարող են աշակերտների անձի մեջ կատարելապես ճանաչել իրենք իրենց: Մեր բոլորի մտքերը մթագնած են: Մենք ապրում ենք հաղորդության խորհուրդներ, որ վատ ենք ընկալում: Մենք լավ չենք գիտակցում, որ Հիսուս իր հույսը դրել է մեզ վրա: Մենք վախենում ենք՝ հենց որ հարցը վերաբերում է մի նոր հանգրվան անցնելուն:

Եվ սակայն հարուցյալ Հիսուս մեր առջևից է գնում՝ քայլելով անհաստատ ջրերի վրա, ուր մենք վախենում ենք ընկղմվել:

39. ԲԱԶՈՒՄ ՓՐԿՎԱԾ ՀԻՎԱՆԴՆԵՐ
(Մարկ. Զ 53—56)

Զ 53 **Երբ դիմացի կողմն անցան, Գեննեսարեթի ցամաքը ելան:**
54 **Եվ երբ նավակից դուրս ելան, տեղի մարդիկ իսկույն նեթ ճանաչեցին նրան:**
55 **Եվ ամբողջ գավառում, այս ու այն կողմ վազելով, սկսեցին մահիճներով հիվանդներ բերել այնտեղ, ուր լսում էին, թե նա գտնվում է:**
56 **Եվ ուր որ մտնում էր՝ գյուղեր, քաղաքներ թե ագարակներ, հրապարակներում դնում էին ախտերով տառապողներին և աղաչում նրան, որ գոնե իր զգեստի քղանցքներին դիպչեն: Եվ նրանք, մի անգամ որ դիպան, բժշկվեցին:**

Փոխանակ գնալու մինչև Բեթսայիդա՝ նավարկության համար սկզբնապես նախատեսված սահմանը, նավակը ետ է դառնում դեպի լճի արևմտյան ափը, անկասկած ոչ շատ հեռու այն տեղից, որտեղ տեղի էր ունեցել հացի բազմացումը: Հավիվ նավակը ցամաք դուրս ելած՝ խուռն բազմությամբ ամեն կողմից գրոհում են մարդիկ, որոնցից հավանաբար շատերն էին օգտվել այն զարմանահրաշ կերակրից, որը բաժանվել էր նախորդ օրը ուշ հետմիջօրեին: Նրանք փոխադրում են իրենց հիվանդներին, որպեսզի սրանք ևս օգտվեն այն զորությունից, որը դուրս է գալիս այդ արտասովոր մարդուց: Եվ այն, ինչ տեղի էր ունեցել նախապես արյունահոսությամբ տառապող կնոջ առընչությամբ, ընդհանուր երևույթ է դառնում (Մարկ. Ե 21—43): Բավական էր դիպչել Հիսուսի զգեստի քղանցքներին, որպեսզի մարդիկ փրկվեին:

Երրորդ և վերջին անգամ է, որ Մարկոսը իր ավետարանում նկարագրում է Հիսուսի վրա վազող բազմություններին՝ հավաքաբար բժշկվելու համար: Առաջինը (Մարկ. Ա 32—34) Կափառնայումում էր, առաջին օրվա երեկոյան, երբ Տերը ցույց էր տվել իր զորությունը: Նա այն ժամանակ ընդառաջել էր խնդրանքներին: Երկրորդ անգամ ծովի ափին էր, կոպտության և թշնամանքի մթնոլորտում (Մարկ. Գ 7—12), երբ նա, ընդհակառակն, խույս էր տվել խնդրողների ագահությունից: Դա այն ժամանակ էր, երբ հարկավոր էր կատարել ընտրություն՝ Հիսուսի հետ կամ Հիսուսի դեմ: Նա պետք է պաշտպանվեր ամեն տեսակ հակառակորդներից: Այդ ժամանակից ի վեր կացությունը բարեփոխվել է. կազմակերպվել է աշակերտների խումբը և հետևվում է իր սեփական երթուղուն: Այժմ հրեա բազմությունները ավելի շուտ ներկայանում են որպես չքավոր, իրենց տառապանքների մեջ թողքված և այդ պատճառով էլ շփոթված ու շլմորած մի ժողովուրդ, քան մի ժողովուրդ, որ իսկական վտանգ է ներկայացնում Հիսուսի և նրա առաքելության համար: Ուրեմն, քանի որ նրա մեջ եղող զորությունը կարող էր թեթևացնել նրանց դժբախտությունները, նա ընդառաջում և օգնում է նրանց:

40. ԿՐՈՆԸ Ի ՍՊԱՍ ԿՅԱՆՔԻՆ
(Մարկ. Է 1—13)

Է 1 **Նրա մոտ հավաքվեցին փարիսեցիները ու դպիրներից ոմանք, որոնք եկել էին Երուսաղեմից:**
2 **Նրանք տեսնելով, որ նրա աշակերտներից ոմանք անմաքուր ձեռքերով, այսինքն՝ անլվա հաց էին ուտում, բամբասեցին,**
3 **որովհետև փարիսեցիները և բոլոր հրեաները, եթե ձեռքները մի լավ չլվանան, հաց չեն ուտում, քանի որ հների ավանդությունը պահում են:**
4 **Նաև՝ դրսից տուն մտնելով՝ եթե նախ չլվացվեն, չեն ուտում: Եվ ուրիշ շատ բաներ էլ կան, որ ավանդաբար պահում են. ինչպես՝ բաժակների, սափորների, պղինձների ու մահիճների լվացումներ:**
5 **Ահա ինչու փարիսեցիները և դպիրները հարց տվեցին նրան. «Ինչո՞ւ քո աշակերտները հների ավանդության համաձայն չեն շարժվում, այլ անմաքուր ձեռքերով են հաց ուտում»:**
6 **Նա պատասխանեց և ասաց նրանց. «Եսային լավ մարգարեացավ ձեր՝ կեղծավորներիդ մասին ասելով. «Այս ժողովուրդը ինձ շրթներո՛վ է մեծարում, բայց նրանց սրտերը ինձնից հեռու են.**
7 **իզուր են ինձ պաշտում. ուսուցանում են վարդապետություններ, որ մարդկանց պատվիրածներն են»:**
8 **Աստուծո պատվիրանը թողած՝ մարդկանց ավանդությունն եք պահում»:**
9 **Ապա ավելացրեց. «Աստուծո պատվիրանը լավ եք անարգում, որպեսզի ձեր ավանդությունը հաստատեք.**
10 **որովհետև Մովսեսն ասում է. «Պատվի՛ր քո հորն ու մորը. և ով որ չարախոսի իր հոր կամ մոր մասին, մահվամբ թող պատժվի»:**
11 **Իսկ դուք ասում եք. «Եթե մեկը հորը կամ մորն ասի՝ ինչ ինձնից պիտի օգտվես, Կորբան է, այսինքն՝ Աստծուն տալու ընծա»,**
12 **դրանով իսկ այլևս թույլ չեք տալիս, որ**

նա իր հոր կամ մոր համար որևէ բան ունի.

13 **և այդպես անարգում եք Աստուծո խոսքը նույն ավանդությամբ, որ դուք փոխանցում եք միմյանց: Եվ սրա նման ուրիշ շատ բաներ եք անում»:**

Հրեական օրենքի պահպանման շուրջ այս բանավեճը Հիսուսի և փարիսեցիների միջև շատ նման է այն բանավեճերին, որոնք տեղի ունեցան Կափառնայումում Ավետարանի քարոզության սկզբին (Մարկ. Բ 1-ից մինչև Գ 6): Հիսուս հարձակման է ենթարկվում նրա համար, որ իր խումբը խախտում է այն կրոնական սովորությունները, որոնք կիրառվում էին իր ժամանակաշրջանում: Նրա աշակերտները չունեն այն խստակեցությունը, որ կարելի էր սպասել խստակրոն մի շարժումից: Այդ ուղղությամբ նրանց տերը առավել ևս կասկածելի է:

Հասկանալի է անշուշտ, որ Մարկոսի ընթերցողները շատ հեռու էին այդ կարգի հարցերից, որոնք գերապանցապես հատուկ էին իսրայելացիներին և որոնք առաջադրվում էին նրանց երկրում: Հռոմի քրիստոնյաները մեծ մասամբ ունեին հեթանոսական ծագում: Նրանք բացարձակապես ծանոթ չէին այդ կանոնների նրբություններին, որոնց եռանդուն պաշտպաններն են փարիսեցիները: Ավետարանիչը ստիպված է բացատրել դրանք իր ունկնդիրների համար: Նրա բացատրությունները բավականին խառնաշփոթ են:

Ինչո՞ւ Մարկոսը հիշատակում է այստեղ այս խիստ բանավեճը: Անտարակույս նրա համար, որ մենք հասնում ենք նրա ավետարանի այն մասին, երբ Հիսուս իր աշակերտների հետ բակում այցելություններ պիտի տա հեթանոսական երկրում: Մաքրության և անմաքրության հարցերը մեծ դեր են խաղում հրեաների և մյուս ժողովուրդների հարաբերություններում: Ավետարանիչն ուզում է ցույց տալ, որ իսկական անմաքրությունը ծիսական չէ, այլ՝ բարոյական (տե՛ս հաջորդ հատվածը՝ Մարկ. Է 14—23): Փարիսեցիները, որոնք խնամքով ի մի են հավաքել մաքրության կանոնները իրենց օրինագրքում, երկրորդ պլանի վրա են թողել կենսական հարաբերությունները մարդկանց միջև: Այդ տեսակետից նրանք անհավատարիմ են Աստուծո ցանկացած Օրենքին: Նրանք ավելի լավ չեն վարվում, քան իրենց հայրերը, որոնց մասին Եսային ասում էր Քրիստոսից դեռևս յոթ դար առաջ:

Այս ժողովուրդը... պատվում է ինձ իր շրթներով,
Բայց իր սրտով հեռացել է ինձանից:
(Եսայի ԻԹ 13)

Արդարև, փարիսեցիների ավանդությունները առաջին դարում հետաքրքիր մի խառնուրդ էին կազմում խստակրոնության և ժամանակակից աշխարհին պատշաճեցված բարքերի:

Սուրբ Երկիրը լեցուն էր օտարականներով՝ հռոմեացի կալվածատերերով և միջերկրականյան ավազանի բոլոր կողմերից եկած վաճառականներով, որոնցից հարկավոր էր պաշտպանվել՝ պահպանելու համար հրեա ժողովրդի ինքնությունը: Այստեղից էլ առաջ է եկել կանոնական լրացումների և մաքրման մի ամբողջ բարդ արարողություն, որպեսզի, տուն վերադառնալուց հետո, հրեաները ցույց տան, թե իրենք պատկանում են ընտրյալ ժողովրդին: Ժողովրդական հրապարակները և քաղաքների շուկաները համարվում էին անմաքրության վայրեր, որովհետև այնտեղ նրանք շփվում էին ամեն տեսակ մարդու հետ:

Դրան հակառակ, այն կարևորությունը, որ ստացել էր Երուսաղեմի տաճարը, և այն զոհագործությունները, որ տեղի էին ունենում այնտեղ, նվազեցրել էին հնագույն ժամանակներից եկած բարոյական որոշ պարտավորությունների խստությունը: Մարդիկ փոխանակ իրենց մեծահասակ ծնողների նյութական կարիքները հոգալու, կարող էին տաճարի գանձանակին վերապահել այն դրամը, որով պարտավոր էին օգնել նրանց: Այդ է արամերեն **կորբան** բառի իմաստը, որ նշանակում է «սրբազան ընծա»:

Բոլոր դարաշրջաններում կրոնական խմբավորումներին ծանոթ է այդ կարգի շեղումը, որը կայանում է արտաքին, ցուցադրական արարքը արդարության պահանջից նախապատիվ համարելու մեջ: Մեղքերի թողության այդ վաճառքը ունի արմատներ, որոնք գնում են ավելի վաղ, քան 16-րդ դարը: Փախուստը դեպի հոգևորը նույնպես այսօրվա երևույթ չէ:

Հիսուս, հետևաբար, հակադրում է այդ բոլոր շեղումներին, ինչպես այդ անում է իր քարոզության սկզբից ի վեր հանուն կյանքի ծառայության: Իմ ծնողների ապրուստը, նրանց գոյության պահպանումն ավելի կարևոր է, քան տաճարը: Ամեն մարդ իմ եղբայրն է, և ոչ մի պատճառ չկա, որ ես նրանցից բաժանվեմ մաքրության կանոններով, որոնք մարդկանց պատորոշելու և միմյանցից անջատելու մի ձև են:

Այսպիսով՝ Հիսուս միանում է Արարչի ցանկությանը և նախապատրաստում Ավետարանը աշխարհի բոլոր ժողովուրդներին քարոզելու գործը:

(Շարունակելի)